**Արձանագրություն N 4**
**ՀՀ առողջապահության նախարարության 2018 թվականի կարիքների համար անհրաժեշտ բաց մրցույթով դեղերի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

«14» «Դեկտեմբերի» 2017թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Մ. Սևումյան

Հանձնաժողովի անդամներ Մ.Հարությունյան
Ն.Թովմասյան

Հանձնաժողովի քարտուղար Հ.Մնացականյան

***1. Ընթացակարգի հայտերի բացման մասին***

---

***(Մ.Սևումյան)***

Ընդունել ի գիտություն, որ 03.11.17թ. հրապարակվել է հրավեր armeps համակարգում:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության իրավաբանական և էլ. հասցեներ | Կազմակերպության ՀՎՀՀ-ն |
|---|---|---|---|
| 1 | «Արֆարմացիա» ՓԲԸ | ք. Երևան,Պուշկինի 56<br>arpharm.erevan@yandex.ru | 02505735 |
| 2 | «Արփիմեդ» ՍՊԸ | ք.Աբովյան, 2-րդ միկրոշրջ. 19 շենք<br>info@arpimed.com | 03519299 |
| 3 | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ | ք.Երևան, Տիչինայի 3-րդ նրբ 2/2<br>natalipharm@bk.ru | 01222567 |
| 4 | «Արմֆարմ» ՍՊԸ | Ք.Երևան, Շինարարների 8, բն.1<br>info@armfarm.com | 01526098 |
| 5 | «ՖԱՐՄ-ԱԴԱՄԱ» ՍՊԸ | Ք.Երևան, Դավիթ Անհաղթի 23,17<br>Pharm-adama@live.com | 02594324 |
| 6 | «Էմմա Ասլանյան և որդիներ» ՍՊԸ | Ք.Գորիս, Մաշտոցի 119 ա<br>Aregaslanyan84@gmail.com | 09210769 |
| 7 | «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ | Ք.Երևան, Մաշտոցի պող.2, տարածք 39<br>mlnpharm@arminco.com | 02567316 |
| 8 | «Լևոն և Լամարա» ՍՊԸ | Ք.Երևան, Դավթաշեն 1-ին թաղ. 21 շենք, 54 շին<br>levonlamara@gmail.com | 00021334 |
| 9 | «Բեյբի-Սիմ» ՍՊԸ | Ք.Երևան, Ֆրունզե փող. 37 շին<br>Baby-sim@mail.ru | 02237021 |
| 10 | «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ | Ք.Երևան, Ղ.փարպեցու 22/14<br>armine@lambronpharm.am | 02542882 |

| | | | |
|---|---|---|---|
| 11 | ՓԱՐԹՆԵՐՇԻՓ ՖՈՐ ՍԸՓԼԱՅ ՉԵՒՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԻՆՔ | procurement@nl.pfscm.org | 203258654 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### 2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

***(Մ.Սնումյան)***

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### 3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

***(Մ.Սնումյան)***

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ «Բեյբի-Սիմ» ՍՊԸ-ի: Մասնավորապես, Հավելված 5-ը և Հավելված 10-ը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին: Հավելված 5-ում 3-րդ և 4-րդ սյունյակներում գումարները նշված չեն տառերով, իսկ հայտի ապահովման չափը գերազանցում է 5 %-ը:

Որոշվեց «Բեյբի-Սիմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### 4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

***(Մ.Սնումյան)***

Որոշվեց «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով գնման ընթացակարգը կասեցնել և հրավիրել բանակցությունների:

«Արփիմեդ» ՍՊԸ-ն՝ 1, 2, 4, 5, 26, 27, «Ռիխտեր Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն՝ 7, 45, «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ն՝ 11, 12, 38, 39, 43, «Արֆարմացիա» ՓԲԸ-ն՝ 16, 17, 18 և «Արմֆարմ» ՍՊԸ-ն՝ 25 չափաբաժինների մասով՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, իսկ «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ն և «Արֆարմացիա» ՓԲԸ-ն՝ 10 չափաբաժնի մասով, «Ռիխտեր Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն և «ՖԱՐՄ-ԱԴԱՄԱ» ՍՊԸ-ն 20 չափաբաժնի մասով՝ ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն:

Հաջորդ նիստը տեղի կունենա Կառավարական թիվ 3 շենքում, փոքր դահլիճում, 2017 թվականի դեկտեմբերի 20-ին ժամը 16:00:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------- Մ. Սևումյան

Անդամներ՝ ---------------------- Մ. Հարությունյան

---------------------- Ն. Թովմասյան

Քարտուղար՝ ---------------------- Հ. Մնացականյան

**Արձանագրություն N 5**
**ՀՀ առողջապահության նախարարության 2018 թվականի կարիքների համար անհրաժեշտ բաց մրցույթով դեղերի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

«20» «Դեկտեմբերի»
2017թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Մ. Սևումյան |
| Հանձնաժողովի անդամներ | Մ.Հարությունյան<br>Ն.Թովմասյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Հ.Մնացականյան |

***1. Նիսփի բացման մասին***

---

***(Մ.Սևումյան)***

Ընդունել ի գիտություն, որ.

«ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով գնման ընթացակարգի համար «Արփիմեդ» ՍՊԸ-ն, «Ռիխտեր Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն, «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ն, «Արֆարմացիա» ՓԲԸ-ն, «Արմֆարմ» ՍՊԸ-ն և «ՖԱՐՄ-ԱԴԱՄԱ» ՍՊԸ-ն հրավիրվել էին բանակցությունների: 20 չափաբաժնի մասով՝ ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն:

Բանակցություններին մասնակցում էին «Արփիմեդ», «Մ.Լ.Ն Ֆարմ», «ՖԱՐՄ ԱԴԱՄԱ» ՍՊԸ-ների և «Արֆարմացիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչները:

Բանակցությունների արդյունքում Կազմակերպությունների կողմից ներկայացվեցին հետևյալ առաջարկները.

1. «ՖԱՐՄ ԱԴԱՄԱ» ՍՊԸ-ն 20-րդ չափաբաժնի համար առաջարկվեց 53,5 ՀՀ դրամ միավոր գին նախկին 54,5 ՀՀ դրամի փոխարեն:

2. «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի և «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից առաջարկվեց 10-րդ չափաբաժնի մասով նոր գնային առաջարկ ներկայացնելու նպատակով տալ ժամանակ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին***

---

***(Մ.Սևումյան)***

Հաշվի առնելով «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի և «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից արված առաջարկությունը, որոշվեց «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով գնման ընթացակարգը կասեցնել մինչև ս/թ դեկտեմբերի 21-ը ժամը 17:00:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------- Մ. Սևումյան

Անդամներ՝ ---------------------- Մ. Հարությունյան

---------------------- Ն. Թովմասյան

Քարտուղար՝ ---------------------- Հ. Մնացականյան

**Արձանագրություն N 6**
**ՀՀ առողջապահության նախարարության 2018 թվականի կարիքների համար անհրաժեշտ բաց մրցույթով դեղերի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

«25» «Դեկտեմբերի» 2017թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Մ. Սևումյան

Հանձնաժողովի անդամներ Մ.Հարությունյան
Ն.Թովմասյան

Հանձնաժողովի քարտուղար Հ.Մնացականյան

***1. Նիստի բացման մասին***

---

***(Մ.Սևումյան)***

Ընդունել ի գիտություն, որ.

«Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի և «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 10-րդ չափաբաժնի մասով նոր գնային առաջարկ ներկայացնելու նպատակով խնդրել էին տալ ժամանակ՝ մինչև 21.12.17թ. ժամը 17:00: Սահմանված ժամկետին առաջարկ ներկայացրեց միայն «Արֆարմացիա» ՓԲԸ-ն /կցվում է/:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին***

---

***(Մ.Սևումյան)***

Հաշվի առնելով աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ կապված տարեվերջին աշխատանքների հետ, ինչպես նաև հաշվի առնելով 2018թ. գնումների անվանացանկի նախագծի կազմման աշխատանքները, որոշվեց հաջորդ նիստը հրավիրել 2018թ. հունվարի 8-ին ժամը 15:00-ին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ -------------------- Մ. Սևումյան

Անդամներ՝ -------------------- Մ. Հարությունյան

-------------------- Ն. Թովմասյան

Քարտուղար՝ -------------------- Հ. Մնացականյան

Հավելված 5
<<ՀՀ ԱՆ ԲԱԱՊՁԲ-2018/1/2>> ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

# ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով <<ՀՀ ԱՆ ԲԱԱՊՁԲ-2018/1/2>> ծածկագրով բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, <<Արֆարմացիա>> ՓԲԸ-ն առաջարկում է
պայմանագիրը կատարել հետևյալ գներով.

ՀՀ դրամ

| Չափաբաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեքը (ինքնարժեքի և նախատեսվող շահույթի հանրագումարը)/տառերով և թվերով/ | | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | | 4 | | 5 | |
| 10 | Մարդու պլազմա մակարդման գործոն VIII | 42708333.33 | քառասուներկու միլիոն յոթ հարյուր ութ հազար երեք հարյուր երեսուներեք դրամ և երեսուներեք լումա | 8541666.67 | ութ միլիոն հինգ հարյուր քառասունմեկ հազար վեց հարյուր վաթսունվեց դրամ և վաթսունյոթ լումա | 51250000.00 | հիսունմեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ և զրո լումա |

<<Արֆարմացիա>> ՓԲԸ

Գլխավոր տնօրեն Ս. Հովհաննիսյան

[illegible]

**Hasmik Mnatsakanyan**

| | |
|---|---|
| **From:** | MLN Pharm <mlnpharm@arminco.com> |
| **Sent:** | четверг 21 декабря 2017 16:52 |
| **To:** | hmnatsakanyan@moh.am |
| **Subject:** | VIII գործոն |

Հարգելի Հասմիկ,

Տեղեկացնում ենք, որ մեր գնային առաջարկը մնում է նույնը:

Հարգանքով,

ՄԼՆ Ֆարմ